FAO Representation in Armenia

Our Ref.: Your Ref.:

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավար
պարոն Ա. Աղաբաբյանին

Հարգելի պարոն Աղաբաբյան,

Ինչպես տեղյակ եք, 2020 թ. նոյեմբեր ամսից իրականացվում է **«Տեղական դերակատարների զորեղացում հանուն զարգացման Լոռու և Տավուշի մարզերում»** ծրագիրը, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է համատեղ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) կողմից՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունների հետ սերտ համագործակցությամբ: Ծրագիրը փորձնական կարգով իրականացվում է Հայաստանի Լոռու և Տավուշի մարզերում՝ որպես Եվրոպական միության «LEADER» / Համայնքի կողմից առաջնորդվող տեղական զարգացման (ՀԱՏԶ) հայեցակարգի մաս և նպատակ է հետապնդում տեղացի դերակատարներին ու բնակչությանն ակտիվորեն ներգրավել զարգացման գործընթացներում, ստեղծել տեղական զարգացմանն օժանդակող ենթակառուցվածքներ և բարելավել համապատասխան նախարարությունների ու մարմինների կարողություններն ի նպաստ Հայաստանում ԵՄ ՀԱՏԶ մոտեցման հաջող իրականացմանը և կայունության ապահովմանը:

Ծրագրի շրջանակներում ՊԳԿ թիմը նախաձեռնել է ագրոարտադրողների ասոցիացիաների, ֆորմալ և/կամ ոչ ֆորմալ խմբերի ձևավորման և խթանման գործընթաց, որը կոչված է խրախուսելու ֆերմերների, ագրոբիզնեսների, գյուղատնտեսական կոոպերատիվների և գյուղատնտեսական ուղղվածություն ունեցող այլ կազմակերպությունների միջև համագործակցությունը և գիտելիքների փոխանակումը: Նշված գյուղատնտեսական ասոցիացիաները/ոչ ֆորմալ խմբերը գործելու են «ԳանՁոր» Տեղական ակտիվ խմբի (ՏԱԽ) հետ սերտ համագործակցությամբ:

Սույն նամակով խնդրում ենք Ձեզ համայնքի Ավագանու որոշմամբ Այրում բնակավայրի վարչական գրասենյակի շենքում անվարձահատույց 7 տարի ժամկետով տրամադրել սենյակ 14,22 մ^2 տարածքով Ֆերմերների ասոցիացիաների/ խմբերի գործունեության համար:

Կանխավ շնորհակալ ենք համագործակցության համար:

Հարգանքով՝

Գայանե Նասոյան
ՊԳԿ հայաստանյան ներկայացուցչի տեղակալ

Կից՝ սենյակի հատակագիծը